ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «09» 07 2019թ № 521-Ա

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի № 898-Ա ՀՐԱՄԱՆԸ ԵՎ ՀՀ ԳԱԱ «ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետը, պարենային արտադրանքի ոլորտի հավատարմագրման տեխնիկական կոմիտեի 2019 թվականի հունիսի 11-ի № 13/1 որոշումը և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 2019 թվականի հունիսի 27-ի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թ. հոկտեմբերի 19-ի «ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիային Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» № 898-Ա հրամանը կասեցնել 4 ամիս ժամկետով՝ համաձայն պարենային արտադրանքի ոլորտի հավատարմագրման տեխնիկական կոմիտեի 2019 թվականի հունիսի 11-ի № 13/1 որոշման 1-ին կետի:

2. ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիայի նշանակման վկայականի գործողությունը կասեցնել 2019 թվականի հունիսի 12-ից:
3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Կարապետյանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ